

# ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ՆՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՄ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՆՏ ՕՐԵՆՔԻ 35-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 9-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ, 41-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՏԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նաշվի առնելով գործով զեկուցող՝ սահմանադրական դատարանի անդամ Ֆ. Թոխյանի առաջարկությունը,

նկատի ունենալով, որ գործով որպես պարասխանող կողմ դատաքննությանը ներգրավված ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչների՝ ՆՏ սահմանադրական դատարան ներկայացրած բացաբություններում տեղ գրած առանձին փաստարկներ, մասնավորապես՝ առ այն, որ «Նայաստանի Նանրապետության փարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակության մեկնող կամ վեց ամսից ավելի ժամկետով բնակվող Նայաստանի Նանրապետության քաղաքացին, դուրս գալով հաշվառումից, կորցնում է կենսաթոշակ ստանալու իրավունքը...», լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունեն եւ կարող են էական ազդեցություն ունենալ դիմողի կողմից բարձրացված սահմանադրաիրավական վեճի բովանդակության վրա,

ինչպես նաեւ ելնելով «Պետական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի վիճարկվող դրույթների կիրարկման առնչությամբ ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի ու խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձի համալիր ուսումնասիրման անհրաժեշտությունից,

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Գործի դատաքննությունը հետաձգել եւ այն սկսել 2012թ. սեպտեմբերի 25-ին, ժամը 11:00-ին:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով՝ գործի համակողմանի քննության եւ կողմերի դիրքորոշումների ամբողջական բացահայտման անհրաժեշտությունից ելնելով՝ գործի դատաքննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով:

3. Այս կապակցությամբ վերանայել ՆՏ սահմանադրական դատարանի 06.03.2012թ. ՍԴԱՌ-10 աշխարակարգային որոշումը՝ ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ եւ 4-րդ կետերը:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 46-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ սույն գործով ՆՏ սահմանադրական դատարանի նիստին հրավիրել ՆՏ կառավարության ներկայացուցչին՝ սահմանադրական դատարանի հարցերին պարզաբանումներ փալու անհրաժեշտությունից ելնելով:

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՆ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

11 մայիսի 2012 թվականի  
ՍԴԱՌ -29